**Արձանագրություն 2**

**ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/53 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.12.2019թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ*

**Ա.Վարդանյան** - ՀՀ ֆինանսների նախարարի մամուլի քարտուղար ԳՊ/ԳԱՊ,

*Անդամներ*

**Հ.Համբարձումյան** – ֆինանսների նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԳԱ

**Է. Բաղդասարյան** – ՀՀ ՖՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԳԱ

**Ա.Դոյդոյան** - ՀՀ ՖՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ ԳՊ/ԲԱ

**Ջ.Սամսոնյան**- ֆինանսների նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի պետի ժ/պ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող

**Լ. Սահակյան՝** - Ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի ավագ մասնագետ

**Տեղեկություններ հայտերի բացման մասին**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 12:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0:

1. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին**

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «**ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/53**» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
| --- | --- |
| «Մենք հոլդինգ» ՍՊԸ | ՀՎՀՀ 05549356, հասցե՝ ք. Գյումրի, Ջիվանի փ. 15 էլ. փոստ.menqfilmltd@gmail.com, հեռ. 093288088 |
| «Սպռուտ» ՍՊԸ | ՀՎՀՀ 02674057, հասցե՝ ք. Երևան, Սարյան 22 էլ. փոստ info@sproot.am, հեռ: 091566755 |
| «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ | ՀՎՀՀ 00100064, հասցե՝ ք. Երևան, Հյուսիսային պող.,1շ., 6-րդ հարկ, էլ. փոստ info@publicis.am, հեռ: 010537441 |
| ՀՀ քաղաքացի Թորոս Դեր-Արթինյան | հասցե՝ ք. Երևան, Մոսկովյան 28, բն. 92 էլ. փոստ. toros_1@hotmail.com, հեռ: 055538523 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ՀՀ քաղաքացի Թորոս Դեր-Արթինյանի և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի:

Հանձնաժողովը ընդունեց ի գիտություն, որ.

1. «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ կողմից ներկայացված լիազորագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:
2. ՀՀ քաղաքացի Թորոս Դեր-Արթինյանի կողմից ներկայացված հավելված 1-ում բացակայում է անձը հաստատող փաստաթղթի տեսակի անվանումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/53 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացվում է ստորև.

| Չ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ քաղաքացի Թորոս Դեր-Արթինյան | | | | «Սպրոստ» ՍՊԸ | | | | «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ | | | | «Մենք հոլդինգ» ՍՊԸ | | | |
| | | Արժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված գին | Արժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված գին |
| 1 | լուսանկարչական ծառայություններ | 1400000 | 200000 | - | 1600000 | | | | | 4800000 | 1200000 | 1200000 | 7200000 | 5000000 | 1000000 | - | 6000000 |
| 2 | Տեսանկարահանման ծառայություններ | 1400000 | 200000 | - | 1600000 | | | | | 4200000 | 600000 | 960000 | 5760000 | 5000000 | 1000000 | - | 6000000 |
| 3 | մեդիամոնիտորինգի իրականացման ծառայություններ | | | | | 420000 | 180000 | - | 600000 | 1500000 | 200000 | 340000 | 2040000 | | | | |

**Հանձնաժողովը որոշեց.**

1. Ծանուցել «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ -ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունը՝ ներկայացնելով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լիազորագիրը:
2. Ծանուցել ՀՀ քաղաքացի Թորոս Դեր-Արթինյանին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հավելված 1-ում նշված անձը հաստատող փաստաթղթի տեսակի անվանումը:

4. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>

**ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/53** ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ս/թ դեկտեմբերի 17-ին ժամը 14:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** ________________ **Ա. Վարդանյան**

**հանձնաժողովի անդամներ՝** ________________ **Հ.Համբարձումյան**

________________ **Է. Բաղդասարյան**

________________ **Ա.Դոյդոյան**

________________ **Ջ.Սամսոնյան**

**Գնումները համակարգող ՝** ________________ **Լ.Սահակյան**